Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 703 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել նախադպրոցական տարիքի երեխաներին ստանալ որակյալ և ներառական կրթություն Արմավիր քաղաքում՝ հիմնանորոգելով Արմավիր քաղաքի թիվ 5 մանկապարտեզը: Ծրագրի արդյունքում տարեկան շուրջ 120 երեխա հնարավորություն կունենա ստանալ որակյալ նախադպրոցական կրթություն ներկայիս 48-ի փոխարեն: Մանկապարտեզը կլինի քաղաքի առաջին ներառական մանկապարտեզը՝ ապահովելով որակյալ նախադպրոցական կրթություն՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ճապոնիայի կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետությունում, դեսպանատան միջոցով
4.	Ծրագիրը կատարողը	«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, քաղ. Արմավիր, Երևանյան 40 ա, 49 տարածք, ՀՎՀՀ՝ 04417204
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, քաղ. Արմավիր, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	58,098,020 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Արմավիրի համայնքապետարանի կողմից Արմավիր քաղաքի թիվ 5 մանկապարտեզի սեյսմակայունությունն ապահովելուց հետո իրականացվելու են շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ տանիքի, պատուհանների և դռների քանդման աշխատանքներ, վերանորոգման աշխատանքներ, կոյուղու վերանորոգում, արտաքին գազամատակարարման համակարգի կառուցում, ջեռուցման համակարգի կառուցում՝ 57,618,020 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2024 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում: 2. Շինարարական աշխատանքների ֆինանսական աուդիտ 480,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2024 թվականի մայիսի 30-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Շինարարական աշխատանքների իրականացում՝ 57,618,020 դրամ: 2. Աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 480,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 480,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի և Արմավիրի համայնքապետարանի համագործակցությամբ: Վերջինս իրակա-նացնելու է մանկապարտեզի սեյսմիկ ամրացման աշխատանքներն ու մանկապարտեզի կահավորման ու գույքով ապահովման աշխատանքները:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկման և գնահատման հաշվետվություններ կներկայացվեն Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատուն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական

		որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

11.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ